Արձանագրություն N 3

«ՍՀԱՊԱԹ-ԳՀՇՁԲ-2024-2» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի երրորդ նիստի

Գ. Արաքս «27» սեպտեմբերի 2023թ.
ժամը 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Սահակյանը,

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ասատրյանը,

Լ. Սումբուլյանը,

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Կնյազյանը

«ՍՀԱՊԱԹ-ԳՀՇՁԲ-2024-2» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին

1. Հանձնաժողովը 1-ին չափաբաժնի մասով որոշեց՝

1.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված հսկողության ծառայությունների ձեռքբերման համար կայացած «ՍՀԱՊԱԹ-ԳՀՇՁԲ-2024-2» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցած ընկերություններից «Էլիտ Սեքյուրիթի» ՍՊԸ-ն և «Սարդարապատ Սեքյուրիթի» ՍՊԸ-ն հայտերի բացման նիստում առաջարկել են հավասար նվազագույն գներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման նպատակով սույն թվականի սեպտեմբերի 27-ին կողմերը հրավիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որի արդյունքում մասնակիցներից ոչ մեկը նոր գին չի առաջարկել: Հ ամաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-ր դ կետի՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած:

1.2 Տեղեկագրում վերահրապարակել հսկողության ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված «ՍՀԱՊԱԹ-ԳՀՇՁԲ-2024-2» ծածկագրով գնումների մասին հայտարարության և հրավերի տեքստերը «ՍՀԱՊԱԹ-ԳՀՇՁԲ-2024-3» ծածկագրով:

1.3 Հանձնաժողովի հաջորդ՝ ընթացակարգի հայտերի բացման նիստը հրավիրել «ՍՀԱՊԱԹ-ԳՀՇՁԲ-2024-3» ծածկագրով գնում կատարելու մասին հայտարարության և հրավերի տեքստերը տեղեկագրում հրապարակվելու հաջորդող օրվանից հաշված յոթերորդ աշխատանքային օրը՝ ժամը 14:00-ին, «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր,Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ-ի շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Հանձնաժողովը 2-րդ չափաբաժնի մասով որոշեց՝

2.1 Ընտրված մասնակից ճանաչել «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ին՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 40-րդ կետը:

2.2 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով՝ սահմանել անգործության ժամկետ 10 օրացուցային օրով և 36-րդ հոդվածի 2-րդ մասով ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և կնքել պայմանագիր անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Սահակյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ասատրյան

Լ. Սումբուլյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Կնյազյան